ՍԱՀԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

XIX դարի 20-ական թվականների սկզբին հայ իրականության մեջ գործում դերակատարություն է ստանձնում այնպիսի մի նշանավոր գործիչ, ինչպիսին Ներսես Աշտարակեցին էր: Նրա համբավի մասին Լազարյանների հետ մերձավոր հարաբերությունների մեջ գտնվող Մելիքսեդեկ քահ. Ղամազյանը դեռ 1814 թվականին գրում էր Հովակիմ Լազարյանին. «Թէպէտ վեհազնութիւն ձեր չէ տեսեալ զյիշեալ Ներսէս արհին. բայց համարեա թէ մինն է ի Ս. Աթոռն. յամենայն կողմանէ ընտրեալ և իմաստութեամբ գերազարդեալ»[1]:

1814 թվականին Կաթողիկոս Եփրեմ Ա Ջորագեղցին ետ է կանչում Վրաստանի հոգևոր առաջնորդ Աստվածատուր արքեպիսկոպոսին (նա «...ոչ մեծ արդիւնաւորութիւն ցուցուցած էր, եւ ոչ ռուսական կառավարութեան մօտ ազդեցութիւն ստացած էր...»)[2] և տեղը նշանակում Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցուն: Նույն տարվա փետրվարի 18-ին մոտ 44-ամյա վիճակապետը ուղևորվում է Թիֆլիս և այդտեղ արժանանում փառավոր ընդունելության:

Կաթողիկոսը նախապես Ներսեսի մասին ուղարկել էր շատ «գողտրիկ վարքագրութիւն», որը հաղորդվել էր նաև Պետերբուրգ: Սակայն Ներսես Աշտարակեցին նշանակվել էր ոչ միայն Վրաստանի, այլ նաև Ելիզավետպոլի, Շուշիի, Նուխիի, Բաքվի, Շաքիի, Շամախիի և Դերբենդի հայկական համայնքների առաջնորդ: Այդ երևում է թե՛ Հովակիմ Լազարյանին Եփրեմ Կաթողիկոսի հղած կոնդակից[3] և թե՛ Ներսես Աշտարակեցու 1814 թվականի գրություններում ստորանշված պաշտոնների անվանումներից. «Ներսէս արքեպս. հայոց Վրաստանու և ծայրագոյն կառավարիչ Ղարաբաղու, Նուխու և այլոց», «Ներսէս արքեպս. հայոց Վրաստանու և այլոց»[4] և այլն:

Նորանշանակ առաջնորդը Հովսեփ Արղությանի գաղափարակիցներից էր. «... որոնք նրա գծած շաւղով ընթացան. նրա օրինակով ներշնչուած էր Ներսէս Կաթողիկոսը, որ անձնուիրութեան բազմաթիւ գործեր կատարեց Ռուսիայի տիրապետութիւնն իւր հայրենեաց մէջ հաստատելու համար...»[5]:

Կաթողիկոսի առաջադրությամբ կարճատև ժամանակաընթացքում Ներսեսը հաստատվում է Ալեքսանդր I-ի կողմից և ինքնակալությանը հավատարիմ հպատակության

---

[1] Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 104, գործ 8, վավ. 111:

[2] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927, էջ 3423:

[3] Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գ. 5, վավ. 99:

[4] Մաշտոցի անվ. Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164 ա, վավ. NN 40, 45, 46, 47, 48:

[5] Կարապետ Եզեանց, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի եւ Ռուսաց կառավարութեան յարաբերութիւնների ծագումը, Թիֆլիզ, 1904, էջ 41:

երդում տալիս: Ի տարբերություն նախորդ առաջնորդների, որոնք նշանակվում կամ հետ էին կանչվում կաթողիկոսի կոնդակով, Աշտարակեցուն պաշտոնանկ կարող էր անել միմիայն կայսրը: Հետագայում, 1836 թ. մարտի 11-ին, այդ կարգը ամրագրվեց Նիկոլայ I կայսեր հրամանագրով վավերացված «Պոլոժենիե»-ում: «Կայսերահաստատ» թեմակալը շուտով բարեկամանում է Կովկասի կառավարչապետ Նիկոլայ Ռտիշչևի, այլադավան քրիստոնյաների գործերը վարող նախարար իշխան Գոլիցինի և բարձրաստիճան այլ անձանց հետ:

Ինչպես նկատել է բազմավաստակ պատմաբան Լեոն, «Մտնելով Թիֆլիս առաջնորդական պաշտոնով. Ներսեսը հենց առաջին քայլերից սկսում է այնպիսի գործունեություն, որ դառնում է ոչ միայն Վրաստանի, այլև ամբողջ ռուսական Այսրկովկասի հայության առաջնորդ և կառավարիչ: Թիֆլիսի հայ գաղութն այդ ժամանակից է սկսում ձեռք բերել ղեկավարող, հրահանգող և ուղղություն տվող կենտրոնի նշանակություն»[6]:

Վիրահայոց թեմն այդ ժամանակ խիստ անբարեկարգ վիճակում էր. եկեղեցիները թալանված ու աղքատ, մեծահարուստները փորձում էին իրենց կամքին ենթարկել ոչ միայն քահանաներին, այլև արքեպիսկոպոս-առաջնորդներին:

Ձեռնամուխ լինելով եկեղեցական բարեկարգություններին՝ Ներսես Աշտարակեցին անխուսափելիորեն շոշափում է տեղի հայոց վերնախավի շահերը և հանդիպում՝ գնալով ուժեղացող մի դիմադրության, որն Ալ. Երիցյանի բնորոշմամբ դառնում է «ոչ պակաս քան Դավիթ Դանիէլեան շփոթը»[7]:

Թեմակալի հակառակորդներն էին՝ տեղի ազնվականները, ամենանշանավոր հայերը և մի քանի ավագ քահանաներ: Կաթողիկոսն իր հղած կոնդակներով հաշտություն ու խաղաղություն էր քարոզում: Մասնավորապես համառում էին փոքրաթիվ, բայց Թիֆլիսում մեծ ազդեցություն ունեցող Բեհբության իշխանները:

Հակառակորդների դեմ պայքարում Աշտարակեցին դիմում է նշանավոր գործիչ, Պետերբուրգում բարձր դիրքի հասած (действительный статский советник) Հարություն Արարատյանի պաշտպանությանը: Այդ առնչությամբ պրոֆ. Վ. Պարսամյանը գրում է. «Թիֆլիսի մի շարք ազդեցիկ հայերի հետ ունեցած իր վեճերի կապակցությամբ, 1815-1816 թթ. քանիցս դիմում է իր գերազնիվ հայրենակցի օգնությանը»[8]: Եռամյա պայքարում (Գոլիցինի, Ռտիշչևի և ռուս այլ բարձրաստիճան պաշտոնյաների աջակցությամբ) հաղթում է բարեկարգիչը՝ Ներսես Աշտարակեցին:

Աշտարակեցու կարևոր բարեկարգություններից էր թեմի վիճակագրության անցկացումը, որն ուներ նաև քաղաքական և ազգային նշանակություն: Տակավին 1801 թվականին Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Կ. Կնորինգը Վիրահայոց առաջնորդ Հովհաննես Գեղարդակիր եպիսկոպոսից պահանջել էր վիճակագրական տեղեկություններ, ինչն այդ ժամանակ անկարելի էր հավաքել թեմի խիստ անբարեկարգության պատճառով:

---

[6] Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն 2-րդ, ձեռագրի իրավունքով, Երևան, 1927, էջ 38:

[7] Երիցյան Ալ., Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 74:

[8] Պարսամյան Վ. Ա., Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 12-13:

Կայսեր հրամանով Գոլիցինը դիմում է նորահաստատ Ներսես Աշտարակեցուն՝ պահանջելով վերջապես կազմել Վիրահայոց եկեղեցական վիճակագրությունը: Աշխատանքների ընթացքում արքեպիսկոպոսն ստիպված էր այցելել եկեղեցիներ և անձամբ հաշվառել սրբազան անոթները, քահանաների թիվը (նրանց չափից շատ լինելը ժամանակին նկատել է նաև Կովկասի կառավարչապետը), ծխերը, թեմապատկան գույքն ու եկամուտները և այլն:

Այս վիճակագրությունը կազմելու ընթացքում Ներսես Աշտարակեցին վերստին բախվում է իշխանների ու տեղի մի շարք քահանաների հետ և դարձյալ դիմակայում մեծ դժվարություններ: Նա ստիպված թերի է թողնում Թիֆլիսի վիճակագրությունը և 1816 թվականի գարնանը գրեթե փախչում Գորի քաղաք՝ այդտեղ կատարելու նույն գործը: Նախքան այնտեղ գնալը, թեմակալը դիմում է կաթողիկոսին և, ներկայացնելով ստեղծված վիճակը, իր հետագա գործունեության վերաբերյալ համապատասխան հրահանգ խնդրում:

Եփրեմը նախ քաջալերում է Ներսես Աշտարակեցուն. «Իրաւի կարող ես խորտակել մինչ իսպառ զզօրութիւն ի նանիր հակառակութեան նոցա և ոչ ոք կարէ ընդդէմ կալ քեզ յաղագս բարեկարգելոյ զվիճակդ...», ապա պատվիրում. «Իսկ եթէ, տեսցես թէ մինչև ցվախճան յամառեալ կան մնան իբրև զսալ դարբնաց, և այլոց ևս լինին առիթ գայթակղութեան առ սիրելոյ զչարն և ատելոյ զբարին, յայնժամ ի գործ դիր և դու զօրութիւնդ՝ զօրութեամբ Տեառն ամենակալին և ճշմարիտն պատկերի Նորին ի յերկրի (կայսեր), որոյ պատիւն զիրաւունս սիրէ...»[9]:

Այսպիսով՝ անհիմն էին նաև Աշտարակեցու հակառակորդների այն պնդումները, թե թեմակալը, հենվելով ռուսական իշխանությունների վրա և շահարկելով իր համեմատական ինքնուրույնությունը հայրապետից՝ գործում է «ընդդէմ կամաց կաթողիկոսի»:

Անհրաժեշտ է նշել, որ Ներսես Աշտարակեցին ի սկզբանե եղել է կաթողիկոսի հավատարիմ գործակիցը: Նկատի ունենալով Եփրեմ Կաթողիկոսին՝ Մ. Մաներյանցը գրում է. «Սկսաւ վարել զպաշտօն իւր, ունելով գլխաւոր գործակից իւրեան զՆերսէս եպիսկոպոս»[10]:

Քանի որ թեմում քահանաներն անհամեմատ շատ էին, քան հարկավոր էր, չցանկանալով սակայն նրանց զրկել իրենց իրավունքներից և հոգևոր սպասավորություն կատարելուց, այս խնդրի լուծման համար Ներսես Աշտարակեցին ողջախոհ և շրջահայաց ուղի է ընտրում. որոշում է երկար տարիներ ոչ ոքի չձեռնադրել, որպեսզի բնական ընթացքով նվազի հոգևորականների թիվը: Իր նամակներից մեկում նա այս մասին նշում է, որ 1814-1822 թվականներին միայն մեկ հոգու է ձեռնադրել, այն էլ՝ վարդապետ:

Էջմիածնից գալով Թիֆլիս՝ Ներսես Աշտարակեցին չի դադարում մտահոգվել Արարատյան աշխարհի մասին: Դրա վառ ապացույցը Աշտարակեցուն Ռտիշչևի տված այն հարցի պատասխանն է, թե ինչ շքանշան կցանկանար ստանալ կառավարությունից, թե-

---

[9] Երիցյան Ալ., Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա., Թիֆլիս 1894, էջ 96-97:

[10] Մաներ Մագիստրոս Մաներեանց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի. ի Սիմեոնէ մինչ Յովհաննէս Ը 1763-1831, Մոսկուա, 1876, էջ 77-78:

մակալը պատասխանում է, որ իրեն հարկավոր է Մայր Աթոռի իրական պաշտպանությունը[11]: Այդուհանդերձ կառավարչապետը, ցարին հղած իր զեկուցագրում (1816 թ. փետրվարի 14-ին) գովեստի խոսքեր գրելով Ներսես Աշտարակեցու մասին, նշել է նրա եռանդն ու նվիրվածությունը ռուսներին, որ մինչև երկրամասի հոգևոր առաջնորդ նշանակվելը բազմիցս ապացուցել է այդ. Երևանյան արշավանքի ժամանակ (1804 թ.) ըստ ամենայնի օգնելով ռուսական զորքին, ջանք չի խնայել հոգալու պարենի պակասը: Ռտիշչևը թվարկում է Սրբազանի այլ արժանիքներ ևս՝ նշելով հատկապես նրա ջերմեռանդ ծառայությունը իր հոտին՝ խնդրելով ցարին Վիրահայոց առաջնորդին արժանացնել կառավարական պարգևի[12]:

1816 թ. հուլիսի 15-ին Ալեքսանդր I-ը ստորագրում է Ներսես Աշտարակեցուն Ս. Անանայի առաջին աստիճանի շքանշանով պարգևատրելու վերաբերյալ հրովարտակը[13]:

Հաշվի առնելով 1804-1813 թթ. ռուս-պարսկական և 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմներում Պարսկաստանի և Թուրքիայի քաղաքական ու ռազմական լուրջ պարտությունը՝ Աշտարակեցին Հայաստանի ազատագրման հույսը կապում է ռուսական արքունիքի հետ:

Ռուսաստանի հայոց թեմական Հովհաննես արքեպիսկոպոսին հղած նամակում Ներսես Աշտարակեցին խնդրում է ջանք ու եռանդ չխնայել Էջմիածնի ազատության համար, և եթե առայժմ անհնար է այդ, ապա «գոնէ վասն Աթոռոյն մի խնայեսցէ աստուածանման հզօր Կայսրին զիւր հզօր թևոց հովանաւորութիւնն յատուկ դաշնակցութեամբ զյատուկ հրամանագիր զիւր վասն ապահովագրութեան Աթոռոյն և աթոռայնոց առաքեալ առ շահն և առ շահզատայն»[14]:

Ներսես Աշտարակեցին քաջատեղյակ էր Մայր Աթոռի անցուդարձին և շարունակում էր իր խորհուրդներով ու առաջարկություններով աջակցել կաթողիկոսին: Այսպես՝ տակավին 1816 թ. հուլիսի 8-ին Եփրեմ Ա Ջորագեղցուն ուղարկած գրությունով հայտնում է Կովկասի կառավարչապետ և գլխավոր զորահրամանատար, Պարսկաստանում արտակարգ դեսպանորդ գեներալ Երմոլովի՝ 1817 թ. ապրիլին Պարսկաստան կատարելիք դիվանագիտական այցի մասին և խորհուրդ տալիս Էջմիածնում պատշաճ ընդունելություն կազմակերպել. «Նոր կուսակալն առանց կարծեաց գայ այդր ի գնալն առ շահն և արժան է ունել վասն նորա զարժանաւոր նախահոգիութիւն վասն ընդունելութեան ըստ տեղւոյն, ըստ կերակրոյն...»[15]:

Նախքան արտակարգ դեսպանորդի մեկնելը՝ Աշտարակեցին հանդիպում է նրան, մանրամասն ներկայացնում Մայր Աթոռի դրությունն ու պարսկական բռնությունները: Խնդրում է Երմոլովին միջնորդել պարսից շահի և բարձրաստիճան պաշտոնյաների մոտ՝ հայոց ծանր վիճակը թեթևացնելու համար:

---

[11] Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 106:

[12] Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 158, վավ. 141 ա, բ:

[13] ЦГИА СССР, Ф. 880, оп. 5, е. х. 381, л. 19.

[14] Մաշտոցի անվ. Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164 բ, վավ. 55:

[15] Մաշտոցի անվ. Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164 բ, վավ. 1014:

1817 թ. մայիսի 2-ին Երմոլովի ղեկավարությամբ Պարսկաստան մեկնող 200 հոգուց բաղկացած ռուսական պատվիրակությունը ժամանում է Էջմիածին և արժանանում ջերմ հյուրընկալության: Այդ կապակցությամբ Երմոլովի անձնական քարտուղար Ալեքսանդր Խուդաբաշյանը գրում է. «...Իրաւի յոյժ պատուով և վայելչապէս ընկալաւ զմեզ սրբազնագոյն վեհն, և եթէ ինքն գերազանց դեսպանն՝ նոյնպէս և ամենայն ընկերակիցք իմ, այնքան ջատագով և գոհունակ եղեն՝ մինչև ոչ կարեմ բացայայտել ձեզ զգացողութիւն իւրեանց: Այսպիսի բարեյաջող առիթ բաւականութեան մեծաւորի իմոյ, գիտէ սրբազնութիւն ձեր ըստ ազգասիրութեամբ իմոյ՝ որքան ախորժելի էր ինձ»[16]:

Ներսես Աշտարակեցին նամակագրական կապեր ուներ և որոշ բանակցություններ էր վարում նաև պարսից ղեկավար շրջանների հետ: Այս առումով ուշագրավ է 1823 թ. նոյեմբերին Էջմիածնի ծանր վիճակը թեթևացնելու հույսով գահաժառանգ և Ատրպատականի նահանգապետ Աբաս-Միրզայի մոտ Տաթևի Մարտիրոս արքեպիսկոպոսին ուղարկելը[17]:

Այսպիսով, Վիրահայոց թեմական գործերի բարեկարգմանը զուգընթաց Ներսես Աշտարակեցու հոգածության կենտրոնում էր Արևելյան Հայաստանի ազատագրումը և Ս. Էջմիածնի վիճակը:

---

[16] Մաշտոցի անվ. Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164 բ, վավ. 1375, թ. 26:

[17] Մաշտոցի անվ. Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 795: